ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ԱՊՐԻԼ 2005)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
«ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի
«Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է
մակրոտնտեսական, հարկաբյուջետային, դրամավարկային,
ինչպես նաև ՀՀ վճարահաշվարկային, բանկային համակարգի
հիմնական ցուցանիշների և տնտեսական նորմատիվների
վերաբերյալ տեղեկատվություն:
Մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ
տեղեկատվության աղբյուրը
ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է,
իսկ հարկաբյուջետային, դրամավարկային և բանկային
վիճակագրության տվյալների աղբյուրը՝
ՀՀ կենտրոնական բանկը:
Դրամավարկային և բանկային վիճակագրությունում ընդգրկված է
ՀՀ միջազգային պահուստների, փողի ագրեգատների,
ֆինանսական շուկայի և փոխարժեքների վերաբերյալ
տեղեկատվություն:

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումներ
տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է.

http:// www.CBA.am

Տնտեսական աճ

2005 թ. հունվար-ապրիլին տնտեսական աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 8.0%: ՀՆԱ-ի աճը հիմնականում պայմանավորվել է ծառայությունների (ազդեցությունը ՀՆԱ-ի աճի վրա կազմել է 3.5 տոկոսային կետ), զուտ անուղղակի հարկերի (2.3) և շինարարության (1.6) աճով:

ՀՆԱ-ի դեֆլյատորը 2005 թ. հունվար-ապրիլին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 106.1%:

Գնաճ

Համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2005 թ. ապրիլին գրանցվել է սպառողական գների ընդհանուր մակարդակի 0.9%-ով անկում՝ հիմնականում պայմանավորված պարենային ապրանքների՝ «Բանջարեղեն» (-4.7%), «Ձկնամթերք» (-15.8%) և «Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր» (-1.2%) ապրանքախմբերի գների անկմամբ, որոնք ապահովել են գնանկման համապատասխանաբար 0.3, 0.2 և 0.1 տոկոսային կետերը:

2004 թ. դեկտեմբերի համեմատությամբ սպառողական գների աճը կազմել է 2.8%: 2005 թ. ապրիլին, 2004 թ. նույն ամսվա համեմատությամբ, սպառողական գների ինդեքսը կազմել է 101.3%, իսկ 2005 թ. հունվար-ապրիլին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ՝ 103.6%:

Բնականոն գնաճը ապրիլին, նախորդ ամսվա համեմատությամբ, կազմել է -0.26%, նախորդ տարվա դեկտեմբերի համեմատությամբ՝ 0.04%, 2005 թ. հունվար-ապրիլին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ՝ 0.69%, իսկ նախորդ տարվա նույն ամսվա համեմատությամբ՝ 0.13%:

Արտաքին հատված

2005 թ. հունվար-ապրիլին ապրանքների արտահանումը (ՖՕԲ գներով) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելացել է 30.8 %-ով՝ կազմելով 275.2 մլն ԱՄՆ դոլար՝ ի հաշիվ արտահանման մեջ 33.5% կազմող «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և 40.3% կազմող «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի արտահանման ծավալների համապատասխանաբար 196.9% և 18.0% աճի: Առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի արտահանման ծավալները հաշվի առնելու արտահանումն աճել է 41.2%-ով:

Ներմուծումը (ՍԻՖ գներով) կազմել է 514.2 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճելով 29.8%-ով: Առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի ներմուծման ծավալները հաշվի առնելու ներմուծումն աճել է 26.1%-ով: Ներմուծման աճը հիմնականում պայմանավորված է եղել ներմուծման մեջ 25.3% կազմող «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», 11.0% կազմող «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» և 7.5% կազմող «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբերի ներմուծման ծավալների համապատասխանաբար 42.2%, 58.8% և 65.5% աճով:

Արդյունքում, 2005 թ. հունվար-ապրիլին առևտրային հաշվեկշռի պակասուրդը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, ավելացել է 28.6%-ով (առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի՝ 16.7%-ով) և կազմել 239.0 մլն ԱՄՆ դոլար:

Պետական հատված

Ապրիլին, ինչպես և նախորդ ամիսներին, արձանագրվել է պետական բյուջեի եկամուտների գերակատարում ծրագրված մակարդակների համեմատությամբ: Այսպես,

եկամուտներն ու դրամաշնորհները կազմել են 29.2 մլրդ դրամ՝ ծրագրված 28.1 մլրդ դրամի փոխարեն, որտեղ հարկային եկամուտները կազմել են 28.6 մլրդ դրամ՝ ծրագրված 27.3 մլրդ դրամի փոխարեն, իսկ ոչ հարկային և կապիտալ եկամուտները՝ 0.6 մլրդ դրամ՝ ծրագրված 0.8 մլրդ դրամի փոխարեն: Ամսվա հարկային եկամուտների միջին օրական մուտքերը կազմել են մոտ 1.3 մլրդ դրամ՝ առաջին եռամսյակի միջին 1.0 մլրդ դրամի և նախորդ տարվա ապրիլի 1.0 մլրդ դրամի փոխարեն:

Ապրիլին հարկերի հավաքագրման գործընթացն ունեցել է համաչափ բնույթ: Ամսվա վերջին երեք օրը հավաքագրված հարկերը կազմել են ամսվա հարկերի 12.6% -ը՝ հունվարի՝ 23.8%-ի, փետրվարի 21.3%-ի և մարտի 14.2%-ի փոխարեն:

Բյուջեի ծախսերը ապրիլին կազմել են 27.7 մլրդ դրամ՝ ծրագրով նախատեսված 26.8 մլրդ դրամի փոխարեն: Արդյունքում առաջացել է 1.5 մլրդ դրամի հավելուրդ, որը ձևավորվել է արժեթղթերի տեղաբաշխումից ստացված 3.9 մլրդ դրամ զուտ մուտքերի, 1.3 մլրդ դրամ արտաքին վարկի մարման և 4.1 մլրդ դրամ ՀՀ կենտրոնական բանկում Կառավարության միջոցների ավելացման հաշվին: Ընդ որում, ամսվա ընթացքում ՀՀ կառավարության ավանդներն ավելացել են 2.9 մլրդ դրամով, իսկ միասնական հաշվում պետբյուջեի միջոցները՝ 1.2 մլրդ դրամով:

Դրամավարկային քաղաքականություն

Հաշվի առնելով առաջին եռամսյակի արդյունքներով փողի բազայի՝ տատանումների թույլատրելի միջակայքի վերին սահմանի ավելի քան 3.0 մլրդ դրամով գերազանցումը, ինչպես նաև ապրիլին սպասվող ներքին ինքնավար հոսքերի (պակասուրդային հարկաբյուջետային քաղաքականություն և նախորդ ամիս կիրառված դրամավարկային ներքաշող գործիքների մարումներ) ընդլայնողական բնույթը (8.4 մլրդ դրամ)՝ Կենտրոնական բանկը նախատեսում էր հիմնականում վերածնակերպել դրամավարկային գործիքների մարումները: Արդյունքում, տարեկան ծրագրի եռամսյակային համամասնություններով ապրիլին բաժին ընկնող աճը կապահովվեր մարտի վերջին փողի բազայի ձեռքբերված բարձր մակարդակի (123.6 մլրդ դրամ) պահպանման հաշվին, որի պարագայում անգամ ապրիլի վերջին ցուցանիշը կգերազանցվեր շուրջ 1.0 մլրդ դրամով: Ընդ որում, Կենտրոնական բանկը ծրագրի համեմատ առավել ընդլայնողական քաղաքականության ուղղվածությունը պահպանել է այն նկատառումով, որ արտարժութային ներհոսքի աճի տեմպերի շարունակմամբ և տարեսկզբից դրսևորված դրամայնացման գործընթացով պայմանավորված՝ ապրիլին նույնպես կդիտվի դրամի բարձր պահանջարկ:

Փաստացի արդյունքներով փողի պահանջարկի աճը զգալի գերազանցել է սպասելիքները, որի պարագայում փողի բազան ապրիլին ևս ավելացել է 6.8 մլրդ դրամով և ամսվա վերջին կազմել 130.4 մլրդ դրամ՝ գերազանցելով տատանումների թույլատրելի միջակայքի վերին սահմանը 7.7 մլրդ դրամով:

Իրացվելիության մեծածավալ ներարկում է տեղի ունեցել ՀՀ կենտրոնական բանկի կողմից արտարժույթի առքի հետևանքով, որի հաշվին ԿԲ ԶԱԱ-ն համալրվել են 10.7 մլրդ դրամով: Միաժամանակ, ԶԱԱ-ն նվազել են 1.5 մլրդ դրամով՝ պայմանավորված Կառավարության արտաքին պարտքի սպասարկմամբ: Արդյունքում, Կենտրոնական բանկի զուտ արտաքին ակտիվներն ավելացել են 9.2 մլրդ դրամով և ամսվա վերջին կազմել 180.6 մլրդ դրամ:

ՀՀ կենտրոնական բանկի ԶՆԱ-ն նվազել են 2.4 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված Կենտրոնական բանկի հանդեպ Կառավարության զուտ պարտավորությունների ցուցանիշի շարժերով: Կառավարության կողմից ամսվա ընթացքում իրականացված ավելցուկային հարկաբյուջետային քաղաքականության արդյունքում 3.5 մլրդ դրամով ավելացել է Կենտրոնական բանկում Գանձապետարանի միասնական հաշվի մնացորդը: Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության փոխպայմանավորվածության՝ ապրիլին տեղի է ունեցել պետարժեթղթերի լրացուցիչ տեղաբաշխումներ, որի արդյունքում ստացված շուրջ 2.9 մլրդ դրամի մուտքերն ամբողջությամբ ավանդադրվել են Կենտրոնական բանկում: Միևնույն ժամանակ, իրացվելիության կարճաժամկետ խնդիրների լուծման անհրաժեշտությունից ելնելով՝ ԿԲ-ն ՊՊ երկրորդային շուկայից գնել է 1.3 մլրդ դրամի արժեթուղթ՝ արժեթղթերի պորտֆելի մնացորդը հասցնելով 7.0 մլրդ դրամի: Արդյունքում Կառավարության զուտ պարտավորությունների ցուցանիշը Կենտրոնական բանկի հանդեպ նվազել է 5.1 մլրդ դրամով՝ նախատեսված մոտ 1.8 մլրդ դրամ աճի փոխարեն:

ՁՆԱ-ի կառուցվածքում 648 մլն դրամով նվազել է Կենտրոնական բանկի զուտ այլ ակտիվների ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված ծրագրային և փաստացի փոխարժեքների տարբերության չափով ՁԱԱ-ի ավելացման չեզոքացմամբ:

Բանկերի հետ փոխհարաբերությունները, ինչպես ծրագրված էր, ընթացել են հիմնականում նախորդ ամսում կիրառված ներքաշող գործիքների մարումների վերաձևակերպման ուղղությամբ: Մեծ ծավալ է կազմել ավանդադրման մշտական հնարավորության գործիքը՝ համախառն ծավալը 16.5 մլրդ դրամ, թեև մարումները գերազանցել է 2.1 մլրդ դրամով: Կենտրոնական բանկը բանկերի հետ կնքել է նաև 2.2 մլրդ դրամ ծավալով հակադարձ ռեպո գործառնություն՝ 3.4 մլրդ դրամ մարման պարագայում: Այսինքն, նշվածի արդյունքում զուտ ներարկվել է 3.3 մլրդ դրամի իրացվելիություն, որը պայմանավորվել է ամսվա ընթացքում բանկերում ծագած կարճաժամկետ խնդիրներով, ինչին նպատակաուղղվել են նաև Կենտրոնական բանկի կողմից երկրորդային շուկայում պետարժեթղթերի գնման վերոնշյալ գործառնությունները:

Ապրիլին ևս պահպանվել են կանխիկի հանդեպ պահանջարկի աճի բարձր տեմպերը (ավելի քան 6.6 մլրդ դրամ), որը հիմնականում պայմանավորված էր տնտեսությունում ընթացող դրամայնացման գործընթացով և Կենտրոնական բանկի կողմից արտարժույթի առքով: Դա բավականին բարձր ցուցանիշ է, եթե հաշվի առնենք, որ նախորդ տարվա նույն ամսում Կենտրոնական բանկից դուրս կանխիկն ավելացել էր 660.0 մլն դրամով, իսկ 2003-ին՝ 4.0 մլրդ դրամով: ՀՀ կենտրոնական բանկում առևտրային բանկերի և այլ կազմակերպությունների միջոցներն ավելացել են 130.0 մլն դրամով:

Չնայած Կենտրոնական բանկից դուրս կանխիկի բարձր տեմպերով աճին՝ բանկերը շարունակում են տնօրինել բավականին մեծ ծավալի դրամային ավելցուկ՝ միջին ամսական 6.3 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 2.5 մլրդ դրամի փոխարեն: Այդուհանդերձ, նախորդ ամսվա համեմատ դա նվազել է 1.3 մլրդ դրամով, քանի որ ամսվա ընթացքում բանկերն ունեցել են իրացվելիության կարճաժամկետ խնդիրներ, ինչն անդրադարձել է ամսվա միջին մակարդակի վրա:

Փողի զանգվածը (առանց կուտակված տոկոսների) ապրիլին աճել է 4.5 մլրդ դրամով և ամսվա վերջին կազմել 282.3 մլրդ դրամ: Պահպանվել են փողի զանգվածի դրամային տարրերի աճի բարձր տեմպերը, մասնավորապես, շրջանառությունում գտնվող կանխիկն ավելացել է 7.1 մլրդ դրամով՝ ամսվա վերջին կազմելով 98.5 մլրդ դրամ: Դրամային ավանդներն աճել են 2.6 մլրդ դրամով, որից 1.5 մլրդ դրամը բաժին է ընկել ցպահանջ, իսկ 1.1 մլրդ դրամը՝ ժամկետային ավանդներին: Արդյունքում, դրամային զանգվածն ամսվա ընթացքում աճել է 9.7 մլրդ դրամով՝ կազմելով 154.9 մլրդ դրամ: Արտարժութային ավանդները նվազել են 5.2 մլրդ դրամով, որը գերակշիռ մասով բաժին է ընկել ցպահանջ ավանդներին՝ 4.8 մլրդ դրամ:

Ապրիլին, ժամանակաշրջանի վերջի դրությամբ փողի և դրամային բազմարկիչների մակարդակները կազմել են համապատասխանաբար 2.16՝ նախորդ ամսվա 2.25-ի և 1.19՝ 1.17-ի փոխարեն, որոնց վրա հիմնականում գերակշռել է կանխիկի փոփոխության ազդեցությունը:

ՊՊ առաջնային շուկայում դիտվել է տոկոսադրույքների որոշակի աճ, մասնավորապես՝ կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը նախորդ ամսվա համեմատ ավելացել է 0.32 տոկոսային կետով՝ կազմելով 4.09%, միջինժամկետ մասնակի մարումներով պարտատոմսերի եկամտաբերությունը՝ 0.65 տոկոսային կետով՝ կազմելով 5.26%: Տեղաբաշխվել է նաև 4 տարի շրջանառության ժամկետայնությամբ միջինժամկետ պարտատոմսերի 1 թողարկում՝ 5.45%-ով:

Արժութային շուկայում ապրիլին առքի և վաճառքի ծավալները համապատասխանաբար կազմել են 135.751 մլն և 135.896 մլն ԱՄՆ դոլար:

2005 թ. հունվար-ապրիլին ՀՀ դրամի անվանական միջին հաշվարկային փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ կազմել է 469.7 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ արժևորվելով 16.6%-ով: Ապրիլին ԱՄՆ դոլարի միջին փոխարժեքը կազմել է 447.9 դրամ՝ նախորդ ամսվա համեմատությամբ արժևորվելով շուրջ 3.9%-ով: 2005 թ. հունվար-ապրիլին ՀՀ դրամի անվանական միջին հաշվարկային փոխարժեքը եվրոյի նկատմամբ կազմել է 614.0 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ արժևորվելով 11.9 %-ով: Ապրիլին եվրոյի միջին փոխարժեքը կազմել է 579.4 դրամ՝ նախորդ ամսվա համեմատությամբ արժևորվելով 5.7%-ով:

Ինչպես և նախորդ ամիսներին, ապրիլին նույնպես ՀՀ ԿԲ-ն հանդես է եկել դրամային գործառնությունների իրականացման հայտարարությամբ (մասնավորապես հակա-

դարձ ռեպո և արժեթղթերի առքի գործառնությունների): ՀՀ կենտրոնական բանկը կնքել է 2,194 մլն դրամի հակադարձ ռեպո գործարք՝ սահմանված 3.75% եկամտաբերությամբ, և գնել 1,287 մլն դրամի արժեթուղթ՝ սահմանված 4.5% եկամտաբերությամբ: Ապրիլին ՀՀ ԿԲ կողմից ներգրավվել է նաև 16,540 մլն դրամի ավանդ՝ սահմանված 1.75% դրույքաչափով:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից ապրիլին դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքները փոփոխության չեն ենթարկվել: Ապրիլին բանկային տոկոսի հաշվարկային դրույքը սահմանվել է 16%:

I. Իրական հատված

Անվանում	*2005թ. հունվար – մարտ*	*2005 թ. հունվար – մարտի իրական աճի ինդեքսը 2004 թ. հունվար – մարտի նկատմամբ (%)*	*2005 թ. հունվար – ապրիլ*	*2005 թ. հունվար - ապրիլի իրական աճի ինդեքսը 2004 թ. հունվար - ապրիլի նկատմամբ (%)*
Համախառն ներքին արդյունք *(մլն ՀՀ դրամ)*	248118.5	107.8	358362.6	108.0
ՀՆԱ դեֆլյատոր *(%. աճողական)*	-	106.2	-	106.1
Մեկ զբաղվածին բաժին ընկնող ՀՆԱ *(հազար ՀՀ դրամ. աճողական)* [1]	228.2	108.5	326.5	108.8
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	144065.6	105.1	194084.3	102.6
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	1847.6	106.0	2378.8	107.3
Գյուղատնտեսության համախառն արտադրանք *(մլն ՀՀ դրամ)*	37888.6	101.1	55845.7	101.7
Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	158433.3	103.5	220297.3	104.0
Կապիտալ շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	20752.1	122.3	37758.3	126.0
Բնակչության դրամական եկամուտները *(մլն ՀՀ դրամ)*	263564.3	106.8[1]	367759.4	108.3[1]
Բնակչության դրամական ծախսերը *(մլն ՀՀ դրամ)*	270270.6	104.0[1]	367836.0	104.1[1]
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	47564[2]	118.5[1]	47810[2]	118.6[1]
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1194.0	-	1203.8	-
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	106.8	-	106.2	-
Գործազրկության մակարդակը *(%)*	8.9	-	8.8	-

II. Արտաքին հատված

Անվանում	*2005 թ. հունվար – մարտ* *(մլն ԱՄՆ դոլար)*	*2005 թ. հունվար – մարտը 2004 թ. հունվար – մարտի նկատմամբ (%)*	*2005 թ. հունվար – ապրիլ* *(մլն ԱՄՆ դոլար)*	*2005 թ. հունվար – ապրիլը 2004 թ. հունվար – ապրիլի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	195.0	128.4	275.2	130.8
Ներմուծում *(ՍԻՖ)*	371.5	127.9	514.2	129.8
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	176.5	127.5	239.0	128.6

III. Գների ինդեքսներ

Ժամանակաշրջան	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	105.4	100.5	100.7	98.2
Փետրվար	99.3	94.8	99.9	98.4
Մարտ	99.1	101.2	122.9	99.6
Ապրիլ	99.1	97.4	99.9	97.3
2005 թ. հունվար – ապրիլը 2004 թ. հունվար – ապրիլի համեմատությամբ	103.6	114.2	111.5	106.4

** Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների:*

IV. Գնաճ

ժամանակաշրջան	*2003*	*2004*	*2005*	*2005*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				*նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*
Հունվար	4.1	2.5	5.4	5.4
Փետրվար	-1.5	-0.6	-0.7	4.7
Մարտ	-0.5	0.3	-0.9	3.7
Ապրիլ	2.0	1.2	-0.9	2.8
Մայիս	1.2	1.1		
Հունիս	1.4	-0.1		
Հուլիս	-5.5	-2.5		
Օգոստոս	-2.3	-2.4		
Սեպտեմբեր	2.5	-0.7		
Հոկտեմբեր	-0.1	0.1		
Նոյեմբեր	2.2	0.8		
Դեկտեմբեր	5.2	2.3		
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	8.6	2.0		
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	4.7	7.0		

V. Բնակարանի գնածի փոփոխությունները [1]

Ցուցանիշ	**2003**	**2004**	**2005**
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.69	0.65	0.71
Փետրվար	-0.46	0.05	-0.37
Մարտ	0.00	0.03	-0.26
Ապրիլ	0.23	0.05	-0.26
Մայիս	0.06	0.04	
Հունիս	0.61	-0.13	
Հուլիս	-0.55	-0.50	
Օգոստոս	-0.18	-0.31	
Սեպտեմբեր	1.20	-0.30	
Հոկտեմբեր	0.04	-0.16	
Նոյեմբեր	0.94	-0.05	
Դեկտեմբեր	2.07	0.30	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	1.16	4.45	0.72
Փետրվար	0.86	5.60	1.07
Մարտ	1.04	6.37	0.71
Ապրիլ	0.37	6.39	0.13
Մայիս	0.49	6.23	
Հունիս	2.44	5.41	
Հուլիս	2.26	6.71	
Օգոստոս	2.61	6.90	
Սեպտեմբեր	5.33	6.02	
Հոկտեմբեր	4.65	5.67	
Նոյեմբեր	4.23	4.39	
Դեկտեմբեր	4.67	0.55	

VI. Բնակարանի գնածին առավելապես նպաստող 10 ապրանքատեսակները [1]

Անվանում	***Նպաստումը բնակարանի գնածին, տոկոսային կետ***
նախորդ ամսվա նկատմամբ	
Բնակարանի գնած. *այդ թվում*	**-0.26**
այլուր առաջին տեսակի	0.03
այլուր բարձր տեսակի	0.02
կարագ	0.02
այլ յուղեր	0.02
շաքարավազ	0.02
ձու	0.02
հաց առաջին տեսակի	0.01
նրբերշիկ	0.01
մածուն	0.01
հնդկացորեն	0.01


[1] *Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների:*
[2] *Ըստ ՀՀ ԱՎԾ նախնական տվյալների:*

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ [1]

(մլն ՀՀ դրամ)

Ժամանակաշրջան	Պահանջներ Կառավարության նկատմամբ			Կառավարության ավանդներ					Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ[2]	Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ[2,3]
	պետական կարճաժամկետ պարտատոմսեր	պետական արժե-կտրոնային պարտատոմսեր	ընդամենը	կենսաթոշ. համակ. հաշիվներ և ավանդներ դրամով	կենսաթոշ. համակ. հաշիվներ արտարժ.-ով	ՕԻԳ-երի միջոցներ դրամով	ՕԻԳ-երի միջոցներ արտարժույթով	ընդամենը		
2004										
Դեկտեմբեր [4]	193	5711	5904	42512	126	0	97	42735	**-36830**	***-36815***
2005										
Հունվար	193	5658	5852	63919	124	0	97	64141	**-58289**	***-58268***
Փետրվար	193	5598	5792	64629	122	0	98	64849	**-59057**	***-59162***
Մարտ	193	5526	5719	65220	119	90	99	65528	**-59809**	***-60054***
Ապրիլ	193	6783	6977	71670	114	35	98	71917	**-64941**	***-65255***


[1] Ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:
[2] Կառավարության նկատմամբ պահանջների և Կառավարության ավանդների տարբերությունը:
[3] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:
[4] Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները:



ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ[1, 2]

(մլն ՀՀ դրամ)

Ժամկետ	Առևտրային բանկերի պարտավորությունները Կառավարության նկատմամբ[3]	ԿԲ պարտավորությունները Կառավարության նկատմամբ	Ընդամենը
2004			
Դեկտեմբեր	12221	42735	54956
2005			
Հունվար	15029	64141	79170
Փետրվար	17396	64849	82245
Մարտ	15408	65528	80936
Ապրիլ	15917	71917	87834



[1] Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ: Ներկայացված տվյալները հաշիվների մնացորդներն են ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

[2] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:

[3] Ընդգրկված են առևտրային բանկերի ցպահանջ և ժամկետային պարտավորությունները Գանձապետարանի, ինչպես նաև ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի և տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ:

ՓՈՂԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 04 [4]	Հ – 05	Փ – 05	Մ - 05 [4]	Ա – 05
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)					
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1,2]	***149266***	***160018***	***165260***	***171489***	***180578***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-17216***	***-42573***	***-48403***	***-47871***	***-50196***
Կառավարություն	-36830	-58289	-59057	-59809	-64941
Բանկեր	10857	9653	5100	5064	8339
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	1157	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի ներգրավման սվոփ	0	0	0	0	0
Ավանդներ (-)	-2000	-700	-6600	-4100	-2000
Հակադարձ ռեպո (-)	0	-1347	0	-2536	-1361
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի տրամադրման սվոփ (-)	0	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	8757	6063	5554	6874	6406
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***129830***	***117152***	***119542***	***123374***	***129198***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***132050***	***117444***	***116857***	***123618***	***130382***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	105534	91268	92635	98827	105457
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	25800	25604	23700	23834	24338
Այլ հաշիվներ	716	572	521	957	586
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	561	529	507	588	578
Այլ հաշիվներ (արտարժույթով)	155	43	14	369	8
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)					
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***10752***	***5242***	***6229***	***9089***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-25357***	***-5829***	***532***	***-2326***
Կառավարություն	-	-21459	-768	-752	-5132
Բանկեր	-	-1204	-4553	-36	3275
այդ թվում՝ ավանդներ (-)	-	-1300	5900	-2500	-2100
Զուտ այլ ակտիվներ	-	-2694	-508	1320	-468
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***-***	***-12679***	***2390***	***3832***	***5824***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-14606***	***-587***	***6761***	***6764***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-14265	1367	6192	6630
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	-	-196	-1904	134	505
Այլ հաշիվներ	-	-144	-51	436	-371
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	-	-33	-21	81	-10
Այլ հաշիվներ (արտարժույթով)	-	-112	-29	355	-361
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)					
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***7.2***	***3.3***	***3.8***	***5.3***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-147.3***	***-13.7***	***1.1***	***-4.9***
Կառավարություն	-	-58.3	-1.3	-1.3	-8.6
Բանկեր	-	-11.1	-47.2	-0.7	64.7
Զուտ այլ ակտիվներ	-	-30.8	-8.4	23.8	-6.8
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***-***	***-9.8***	***2.0***	***3.2***	***4.7***
ՓՈՂԻ ԲԱԶԱ [4]	***-***	***-11.1***	***-0.5***	***5.8***	***5.5***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-13.5	1.5	6.7	6.7
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	-	-0.8	-7.4	0.6	2.1
Այլ հաշիվներ	-	-20.2	-8.8	83.6	-38.8

[1] Առանց սեփականաշնորհման միջոցների: ԶԱԱ-ն ընդգրկում են փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[2] ԶԱԱ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 485.84 դրամ, 1 ՀՓԻ = 1.5530 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.3608 ԱՄՆ դոլար, 1 ՄԲ ֆունտ ստեռլինգ = 1.9258 ԱՄՆ դոլար:

[3] Փողի բազան հաշվարկված է որպես տվյալ ամսվա վերջին օրվան նախորդող հինգ օրերի և հաջորդ ամսվա սկզբի հինգ օրերի միջինը:

[4] Ներառված են եզրափակիչ շրջանառության արդյունքները:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵԿՇԻՌ [1]

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 04	Հ – 05	Փ – 05	Մ –05	Ա - 05
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**55829**	**56969**	**53242**	**50846**	**44797**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	117646	117724	113184	107917	99969
Արտաքին պարտ. փոխարկելի արտարժույթով	-57154	-56395	-56223	-53699	-50917
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով	-4663	-4360	-3719	-3373	-4255
ԶՆԱ	**130829**	**130156**	**129619**	**135579**	**139351**
Կառավարություն	19598	20248	18730	24151	27842
Զուտ պահանջներ ԿԲ նկատմամբ	20989	24849	25598	25777	22542
Պահուստային ակտիվներ	34083	36625	37449	37707	34319
Պարտավորություններ ԿԲ նկատմամբ	-13094	-11776	-11851	-11930	-11777
Տնտեսություն	142426	136997	136586	141043	143390
Ձեռնարկություններ	80113	75460	72354	73767	75828
Դրամով	27361	24391	24240	24542	26419
Արտարժույթով	49224	47601	48094	49206	49389
Արժեթղթեր	3529	3468	20	20	19
Տնային տնտեսություններ	56001	55202	57624	60323	62354
Դրամով	14325	13445	13999	15426	17122
Արտարժույթով	41676	41757	43625	44897	45232
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	42	46	31	29	38
Դրամով	25	25	22	19	23
Արտարժույթով	17	21	10	10	15
Այլ ֆինանսական կազմակերպություններ	6269	6289	6576	6924	5170
Դրամով	2042	1984	2522	3082	2019
Արտարժույթով	4227	4305	4054	3843	3152
Այլ ռեզիդենտներ[2]	0	0	1	0	0
Դրամով	0	0	0	0	0
Արտարժույթով	0	0	1	0	0
Զուտ այլ ակտիվներ	-52183	-51938	-51296	-55392	-54423
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	1836	1572	1604	1600	1289
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժ.)	3052	2249	2279	1785	2804
Արտաքին պարտ. (ոչ փոխարկելի արտարժ.)	-799	-656	-857	-796	-1189
Ներդրումներ փայաբաժիններում	445	445	445	457	459
Միջբանկային պահանջներ	6097	4139	3242	3721	10616
Այլ ակտիվներ	32887	33359	36639	39005	41313
Միջբանկային պարտավորություններ	-5530	-3617	-2793	-3265	-10156
Դրամական շուկայի գործիքներ	-3406	-3371	-3335	-3207	-3091
Կապիտալ հաշիվներ	-68842	-68635	-70214	-73661	-76607
Այլ պարտավորություններ	-17924	-17423	-18305	-21031	-19861
ԱՎԱՆԴՆԵՐ	**186659**	**187126**	**182861**	**186424**	**184148**
Դրամով ավանդներ	46588	47838	49712	53477	56067
Ցպահանջ ավանդներ	33283	32250	35629	36675	38203
Ժամկետային ավանդներ	13304	15588	14083	16802	17864
Ավանդներ արտարժույթով	140071	139288	133149	132947	128080
Ցպահանջ ավանդներ	74453	71481	66296	69120	64726
Ժամկետային ավանդներ	65618	67807	66853	63827	63354

[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:

[2] Չդասակարգված պահանջներ: «Փողի զանգվածի կառուցվածքը» աղյուսակում սույն պահանջներն ընդգրկված են «Ձեռնարկություններ և կազմակերպություններ» տողում:

ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

(մլն ՀՀ դրամ)

ՅՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 04 [6]	Հ – 05	Փ – 05	Մ – 05 [6]	Ա - 05
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)					
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [2]	***205095***	***216987***	***218502***	***222334***	***225375***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***80848***	***52841***	***49899***	***56461***	***57900***
Կառավարություն	-17232	-38041	-40327	-35659	-37099
Տնտեսություն	142469	137037	136622	141075	143419
Ձեռնարկ. և կազմակերպ.	80114	75460	72355	73767	75828
որից՝ կուտակված տոկոսներ	651	637	565	667	667
Տնային տնտեսություններ	56044	55241	57659	60354	62383
որից՝ կուտակված տոկոսներ	790	854	880	945	954
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	42	46	31	29	38
որից՝ կուտակված տոկոսներ	0	0	0	0	0
Այլ ֆինանսական կազմակերպություններ	6269	6289	6576	6924	5170
որից՝ կուտակված տոկոսներ	48	36	36	42	27
Զուտ այլ ակտիվներ	-44388	-46154	-46395	-48955	-48420
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ [3]	***145538***	***130296***	***135012***	***145246***	***154908***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց կուտակված տոկոսների)*	***285172***	***269000***	***267511***	***277883***	***282339***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ [4]	***285943***	***269828***	***268401***	***278796***	***283275***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	98569	82131	85019	91415	98541
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով [5]	33845	32778	36136	37263	38781
կուտակված տոկոսներ	38	41	53	43	49
ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	13304	15588	14083	16802	17864
կուտակված տոկոսներ	142	160	173	191	230
Արտարժույթով ավանդներ	140226	139331	133163	133316	128088
Ցպահանջ [5]	74607	71525	66310	69489	64733
կուտակված տոկոսներ	52	55	65	51	60
ժամկետային	65618	67807	66853	63827	63354
կուտակված տոկոսներ	539	573	599	627	597
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)					
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***11892***	***1515***	***3832***	***3040***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***-28007***	***-2942***	***6562***	***1439***
Կառավարություն	-	-20809	-2286	4668	-1440
Տնտեսություն	-	-5432	-415	4453	2344
Ձեռնարկ. և կազմակերպ.	-	-4654	-3105	1413	2061
որից՝ կուտակված տոկոսներ	-	-15	-72	102	0
Տնային տնտեսություններ	-	-802	2418	2695	2028
որից՝ կուտակված տոկոսներ	-	64	25	65	10
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	-	4	-15	-3	9
որից՝ կուտակված տոկոսներ	-	0	0	0	0
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	20	287	348	-1754
որից՝ կուտակված տոկոսներ	-	-12	0	6	-15
Զուտ այլ ակտիվներ	-	-1766	-241	-2560	535
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ	**-**	***-15242***	***4716***	***10234***	***9662***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց կուտակված տոկոսների)*	**-**	***-16173***	***-1488***	***10372***	***4456***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ	**-**	***-16115***	***-1427***	***10395***	***4479***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	-	-16438	2889	6395	7126
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	-	-1067	3358	1127	1518
կուտակված տոկոսներ	-	3	12	-10	6
ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	-	2284	-1505	2720	1062
կուտակված տոկոսներ	-	18	13	18	39
Արտարժույթով ավանդներ	-	-894	-6168	153	-5228
Ցպահանջ	-	-3083	-5215	3179	-4755
կուտակված տոկոսներ	-	2	10	-13	9
ժամկետային	-	2188	-953	-3027	-472
կուտակված տոկոսներ	-	34	26	28	-30

(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)					
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***5.8***	***0.7***	***1.8***	***1.4***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***-34.6***	***-5.6***	***13.2***	***2.5***
Կառավարություն	-	-120.8	-6.0	11.6	-4.0
Տնտեսություն	-	-3.8	-0.3	3.3	1.7
Ձեռնարկ. և կազմակերպ.	-	-5.8	-4.1	2.0	2.8
Տնային տնտեսություններ	-	-1.4	4.4	4.7	3.4
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	-	10.0	-32.1	-8.1	31.0
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	0.3	4.6	5.3	-25.3
Զուտ այլ ակտիվներ	-	-4.0	-0.5	-5.5	1.1
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ	-	***-10.5***	***3.6***	***7.6***	***6.7***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց կուտակված տոկոսների)*	-	***-5.7***	***-0.6***	***3.9***	***1.6***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ	-	***-5.6***	***-0.5***	***3.9***	***1.6***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	-	-16.7	3.5	7.5	7.8
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	-	-3.2	10.2	3.1	4.1
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	-	17.2	-9.7	19.3	6.3
Արտարժույթով ավանդներ	-	-0.6	-4.4	0.1	-3.9
Ցպահանջ	-	-4.1	-7.3	4.8	-6.8
Ժամկետային	-	3.3	-1.4	-4.5	-0.7

[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:
[2] ԶԱԱ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ԶԱԱ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 485.84 դրամ, 1 ՀՓԻ = 1.5530 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.3608 ԱՄՆ դոլար, 1 ՄԲ ֆունտ ստեռլինգ = 1.9258 ԱՄՆ դոլար, առևտրային բանկերի ԶԱԱ-ն փաստացի փոխարժեքներով:
[3] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ միայն դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները (առանց կուտակված տոկոսների):
[4] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները, արտարժութային ավանդները (ներառյալ կուտակված տոկոսները):
[5] Ընդգրկում են ռեզիդենտների հաշիվները և ցպահանջ ավանդները:
[6] Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները:

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1,2]

(մլն ՀՀ դրամ)


ժամկետ	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	M1 [4]	ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	M2 [5]	Արտարժույթով ավանդներ	M2X [6]
2004							
Դեկտեմբեր	98569	33807	132376	13162	145538	139634	285172
2005							
Հունվար	82131	32738	114869	15428	130296	138703	269000
Փետրվար	85019	36083	121103	13910	135012	132499	267511
Մարտ	91415	37220	128635	16611	145246	132637	277883
Ապրիլ	98541	38733	137273	17635	154908	127431	282339


ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1,3]


(մլն ՀՀ դրամ)

ժամկետ	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	M1 [4]	ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	M2 [5]	Արտարժույթով ավանդներ	M2X [6]
2004							
Դեկտեմբեր	98569	33845	132414	13304	145718	140226	285943
2005							
Հունվար	82131	32778	114909	15588	130497	139331	269828
Փետրվար	85019	36136	121156	14083	135238	133163	268401
Մարտ	91415	37263	128678	16802	145480	133316	278796
Ապրիլ	98541	38781	137322	17864	155187	128088	283275


[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:
[2] Ավանդների մեջ կուտակված տոկոսները չեն ընդգրկված:
[3] Ավանդների մեջ կուտակված տոկոսները ընդգրկված են:
[4] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ դրամը և ցպահանջ ավանդները (ներառյալ հաշիվները):
[5] M2-ը դրամային զանգվածն է. ընդգրկում է M1-ը և դրամով ժամկետային ավանդները:
[6] M2X-ը փողի զանգվածն է. ընդգրկում է M2-ը և արտարժույթով ավանդները (ներառյալ հաշիվները):


Փողի բազան տատանումների թույլատրելի միջակայքում
մլն ՀՀ դրամ
137500
135000
132500
130000
127500
125000
122500
120000
117500
115000
112500
110000
04.01.05
07.01.05
10.01.05
13.01.05
16.01.05
19.01.05
22.01.05
25.01.05
28.01.05
31.01.05
03.02.05
06.02.05
09.02.05
12.02.05
15.02.05
18.02.05
21.02.05
24.02.05
27.02.05
02.03.05
05.03.05
08.03.05
11.03.05
14.03.05
17.03.05
20.03.05
23.03.05
26.03.05
29.03.05
01.04.05
04.04.05
07.04.05
10.04.05
13.04.05
16.04.05
19.04.05
22.04.05
25.04.05
28.04.05
Փողի բազա
Ծրագիր
Ծրագիր՝ +2%
Ծրագիր՝ -2%



Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն ՀՀ դրամ
135000
120000
105000
90000
75000
60000
45000
30000
Հ Փ Մ Ա Մ Հ Հ Օ Ս Հ Ն Դ Հ Փ Մ Ա Մ Հ Հ Օ Ս Հ Ն Դ Հ Փ Մ Ա Մ Հ Հ Օ Ս Հ Ն Դ Հ Փ Մ Ա
02
03
04
05
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ
Պարտ. պահուստ. դրամով
Այլ հաշիվներ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն ՀՀ դրամ
300000
250000
200000
150000
100000
50000
0
Հ Փ Մ Ա Մ Հ Հ Օ Ս Հ Ն Դ Հ Փ Մ Ա Մ Հ Հ Օ Ս Հ Ն Դ Հ Փ Մ Ա Մ Հ Հ Օ Ս Հ Ն Դ Հ Փ Մ Ա
02
03
04
05
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում




Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում



Փողի բազայի ամսական փոփոխությունը և ամսական գնաճը



Փողի զանգվածի ամսական փոփոխությունը և ամսական գնաճը




ՄԵՋՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1]

(մլն ՀՀ դրամ)


ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	M1	M2	M2X
2004					
Դեկտեմբեր	118742	87328	120859	135356	274203
2005					
Հունվար	116919	80711	112024	127674	264176
Փետրվար	120171	86956	124686	137967	272280
Մարտ	127999	93709	133916	149487	281344
Ապրիլ	134550	102563	143076	159872	292963

[1] *Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով:*
Հարթեցման մեթոդիկան նկարագրված է «ՀՀ կենտրոնական բանկի բանբերի» 2001 թ. 2-րդ եռամսյակի համարում հրապարակված «ՀՀ փողի ագրեգատների թվային շարքերի հարթեցումներ» նյութում:
Ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են, քանի որ նոր տվյալների ի հայտ գալուն զուգահեռ համապատասխան ամիսների սեզոնայնության գործակիցները փոխվում են: Այդ իսկ պատճառով «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի յուրաքանչյուր տարվա առաջին համարում հրապարակվում են փողի ագրեգատների սեզոնայնորեն հարթեցված նոր շարքերը:


Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները




Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի փաստացի և հարթեցված մակարդակնե



Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները




Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ[1,2]

(մլն ՀՀ դրամ)

Ցուցանիշներ	2004	2005			
	Դ[4]	Հ	Փ	Մ	Ա
Կենտրոնական բանկի ՁԱԱ	149266	160018	165260	171489	180578
Առևտրային բանկերի ՁԱԱ	55829	56969	53242	50846	44797
Ընդամենը	205095	216987	218502	222334	225375
Կենտրոնական բանկի ՁԱԱ[3]	***150341***	***161160***	***166382***	***172394***	***181915***



[1] *Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:*

[2] *ՁԱԱ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ՁԱԱ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով, առևտրային բանկերի ՁԱԱ-ն փաստացի փոխարժեքներով:*

[3] *Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:*

[4] *Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները:*

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵԿՇԻՌ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 04	Հ - 05	Փ - 05	Մ - 05	Ա - 05
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթ)	**-983**	**-1101**	**-943**	**-851**	**-853**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	331	229	119	160	168
Արտաքին պարտավորություններ փոխ. արտարժ.	-1314	-1329	-1062	-1010	-1021
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով	-	-	-	-	-
ԶՆԱ	**1373**	**1451**	**1373**	**1280**	**1308**
Կառավարություն	-107	-103	-102	-99	-96
Ջուտ պահանջներ առևտրային բանկերի նկատմամբ	1059	1157	1001	756	612
Պահանջներ առևտրային բանկերի նկատմամբ	1363	1459	1301	1052	922
Պարտավորություններ առևտրային բանկերի նկատմամբ	-304	-302	-300	-296	-310
Տնտեսություն	3622	3494	3829	3997	4077
Ձեռնարկություններ	1815	1581	1688	1697	1699
Դրամով	773	557	550	543	537
Արտարժույթով	1042	1025	1138	1154	1163
Արժեթղթեր	-	-	-	-	-
Տնային տնտեսություններ	1781	1891	2120	2155	2235
Դրամով	755	709	730	755	828
Արտարժույթով	1026	1182	1390	1400	1407
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	26	22	21	20	17
Դրամով	2	2	2	1	1
Արտարժույթով	24	20	19	18	16
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	-	-	125	125
Դրամով	-	-	-	125	125
Արտարժույթով	-	-	-	-	-
Այլ ռեզիդենտներ	-	-	-	-	-
Դրամով	-	-	-	-	-
Արտարժույթով	-	-	-	-	-
Ջուտ այլ ակտիվներ	-3201	-3097	-3355	-3373	-3286
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	-	1	6	7	12
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժույթ)	-	-	-	-	-
Արտաքին պարտավոր. (ոչ փոխարկելի արտարժույթ)	-	-	-	-	-
ՀՀ դրամ դրամարկղում	26	42	35	21	7
Ներդրումներ փայաբաժիններում	-	-	-	-	-
Պահանջներ վարկային կազմակերպություններին	-	-	-	-	-
Այլ ակտիվներ	487	492	469	453	392
Պարտավորություն. վարկային կազմակ.-ներին	-	-	-	-	-
Դրամական շուկայի գործիքներ	-	-	-	-	-
Դրամաշնորհներ	-94	-93	-130	-125	-119
Կապիտալ հաշիվներ	-3106	-3371	-3605	-3545	-3433
Այլ պարտավորություններ	-514	-166	-130	-184	-144
ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**390**	**350**	**430**	**430**	**455**
Դրամով փոխառություններ	9	-	-	7	28
Ցպահանջ փոխառություններ	-	-	-	-	-
Ժամկետային փոխառություններ	9	-	-	7	28
Արտարժույթով փոխառություններ	382	350	430	423	427
Ցպահանջ փոխառություններ	-	-	-	-	-
Ժամկետային փոխառություններ	382	350	430	423	427

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 04 [3]	Հ - 05	Փ - 05	Մ – 05 [3]	Ա - 05
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)					
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1]	**204112**	**215886**	**217559**	**221484**	**224521**
Զուտ արտաքին ակտիվներ (Կենտրոնական բանկ)	149266	160018	165260	171489	180578
Զուտ արտաքին ակտիվներ (առևտրային բանկեր)	55829	56969	53242	50846	44797
Զուտ արտաքին ակտիվներ (վարկային կազմ.)	-983	-1101	-943	-851	-853
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**80833**	**52896**	**50032**	**56766**	**58378**
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը	***-17339***	***-38144***	***-40429***	***-35758***	***-37194***
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (Կենտրոնական բանկ)	-36830	-58289	-59057	-59809	-64941
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (առևտրային բանկեր)	19598	20248	18730	24151	27842
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (վարկային կազմ.)	-107	-103	-102	-99	-96
Պահանջներ տնտեսությանը	***145787***	***140228***	***140150***	***144776***	***147186***
Պահանջներ տնտեսությանը (Կենտրոնական բանկ)	43	40	36	32	29
Պահանջներ տնտեսությանը (առևտրային բանկեր)	142122	136695	136286	140747	143080
Պահանջներ տնտեսությանը (վարկային կազմ.)	3622	3494	3829	3997	4077
Այլ ակտիվներ (զուտ)	***-47615***	***-49188***	***-49690***	***-52252***	***-51614***
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԻՐԱՑՎԵԼԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**284945**	**268782**	**267591**	**278250**	**282899**
Ֆինանսական համակարգից դուրս կանխիկ ՀՀ դրամ	98543	82089	84985	91393	98534
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով [2]	33793	32709	35840	37068	38619
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	13060	15501	13995	16714	17775
Արտարժույթով ավանդներ	139159	138133	132340	132645	127515
Վարկային կազմակերպ. ներգրաված փոխառություններ	390	350	430	430	455
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)					
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1]	**-**	**11774**	**1673**	**3925**	**3038**
Զուտ արտաքին ակտիվներ (Կենտրոնական բանկ)	-	10752	5242	6229	9089
Զուտ արտաքին ակտիվներ (առևտրային բանկեր)	-	1140	-3727	-2396	-6049
Զուտ արտաքին ակտիվներ (վարկային կազմ.)	-	-118	158	92	-3
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	**-27937**	**-2864**	**6734**	**1612**
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը	**-**	***-20805***	***-2285***	***4671***	***-1436***
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (Կենտրոնական բանկ)	-	-21459	-768	-752	-5131
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (առևտրային բանկեր) [2]	-	650	-1517	5420	3691
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (վարկային կազմ.)	-	4	1	3	4
Պահանջներ տնտեսությանը	**-**	***-5559***	***-78***	***4626***	***2410***
Պահանջներ տնտեսությանը (Կենտրոնական բանկ)	-	-4	-4	-4	-3
Պահանջներ տնտեսությանը (առևտրային բանկեր)	-	-5427	-409	4462	2332
Պահանջներ տնտեսությանը (վարկային կազմ.)	-	-129	335	168	80
Այլ ակտիվներ (զուտ)	**-**	***-1573***	***-502***	***-2563***	***638***
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԻՐԱՑՎԵԼԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**-**	**-16163**	**-1191**	**10659**	**4649**
Ֆինանսական համակարգից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-16454	2895	6409	7141
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով [2]	-	-1084	3132	1227	1551
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	-	2441	-1506	2719	1062
Արտարժույթով ավանդներ	-	-1026	-5793	304	-5130
Վարկային կազմակերպ. ներգրաված փոխառություններ	-	-41	80	-1	25

[1] ԶԱԱ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ԶԱԱ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով, իսկ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների ԶԱԱ-ն փաստացի փոխարժեքներով:

[2] Ընդգրկում է ռեզիդենտների՝ դրամով հաշիվները և ցպահանջ ավանդները:

[3] Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

(մլն ԱՄՆ դոլար)

Անվանումը	2004	2005			
	Դ [4,5]	Հ	Փ	Մ [4]	Ա
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)*	547.8	561.9	570.4	579.3	593.1
Համախառն միջազգային պահուստներ	575.9	572.1	580.6	589.5	603.3
Ոսկի	0	0	0	0	0
ՀՓԻ ԱՄՀ-ում	12.0	11.7	6.7	6.6	0.9
Արտարժույթ [2]	563.9	560.4	574.0	583.0	602.5
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)* [3]	550.0	564.3	572.9	581.5	596.2


[1] Հաշվարկված են փաստացի փոխարժեքներով: Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով, հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:

[2] Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[3] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:

[4] Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները:

[5] ԱՄՀ-ում ՀՓԻ-ով միջոցները հաշվարկված են հիմք ընդունելով 2004 թ. դեկտեմբերի 31-ին ԱՄՀ կողմից սահմանված 1 ՀՓԻ = 1.5530 ԱՄՆ դոլար փոխարժեքը, որը տարբերվում է տարեվերջի ԿԲ կողմից սահմանված փոխարժեքից:



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

Ցուցանիշներ	2004[3]	2005			
	Դ	Հ	Փ	Մ	Ա
Վարկեր [1]					
Իրավաբանական անձանց					
ՀՀ դրամով	18.8	12.2	20.3	17.8	18.4
ԱՄՆ դոլարով	16.9	11.5	14.2	13.9	11.7
Ֆիզիկական անձանց					
ՀՀ դրամով	22.0	21.7	21.7	22.0	20.5
ԱՄՆ դոլարով	24.3	24.3	24.3	23.8	23.7
Ավանդներ [1]					
Իրավաբանական անձանցից					
ՀՀ դրամով	2.8	7.5	8.3	7.3	6.4
ԱՄՆ դոլարով	5.3	5.8	3.8	5.6	3.3
Ֆիզիկական անձանցից					
ՀՀ դրամով	6.3	7.2	7.3	7.8	6.5
ԱՄՆ դոլարով	5.8	6.1	4.7	3.8	5.2
ԿԲ ռեպո գործառնությունների տոկոսադրույքը	3.75	4.5	4.5	3.75	3.75
ԿԲ-ում ՀՀ բանկերի ավանդների տոկոսադրույքը	1.0	1.75	1.75	1.75	1.75
ԿԲ լոմբարդային վարկերի տոկոսադրույքը	16.0	16.0	16.0	16.0	16.0
Պետական պարտատոմսերի եկամտաբերությունը [2]	5.6	6.0	4.6	4.6	5.3
Գնաճ	2.0	5.4	-0.7	-0.9	-0.9

Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:


[1] Ներկայացված են 91 - 180-օրյա վարկերի և ավանդների միջին կշռված տոկոսադրույքները:


[2] Ներկայացված է միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը:

[3] Ներկայացված են տարվա վերջին ամսվա տոկոսադրույքները: Գնաճը ներկայացված է նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ:

ՀՀ ԴՐԱՄ / ԱՄՆ ԴՈԼԱՐ ՓՈԽԱՐԺԵՔԸ

Ամսաթիվ	Դ - 04	Հ - 05	Փ - 05	Մ - 05	Ա -05
1	500.05	-	477.61	471.00	457.30
2	499.19	-	473.16	470.70	-
3	497.87	-	478.13	470.50	-
4	-	486.05	474.87	470.25	457.30
5	-	486.05	-	470.05	456.60
6	493.87	-	-	-	454.46
7	487.89	488.75	474.35	-	453.31
8	484.89	493.37	474.05	-	452.23
9	478.00	-	473.55	470.05	-
10	478.00	495.01	473.02	469.35	-
11	-	497.39	474.91	469.35	452.23
12	-	499.67	-	-	451.56
13	478.00	501.20	-	-	451.56
14	483.44	501.80	473.77	469.06	450.56
15	483.44	-	473.26	469.06	450.02
16	484.34	-	472.61	468.43	-
17	484.64	500.21	471.61	468.23	-
18	-	499.45	473.45	467.31	448.02
19	-	497.38	-	-	443.77
20	484.64	493.43	-	-	445.25
21	484.75	488.97	472.68	466.11	445.25
22	484.97	-	472.57	464.83	443.75
23	483.83	-	472.26	462.77	-
24	483.92	487.20	471.76	461.60	-
25	-	484.07	471.22	460.39	442.29
26	-	482.34	471.22	-	440.89
27	484.37	481.07	-	-	439.31
28	485.57	-	471.22	459.20	439.41
29	486.23	-	-	457.75	439.25
30	485.84	-	-	458.13	439.25
31	-	478.48	-	458.13	-
ժամանակահատվածի վերջ	485.84	478.48	471.22	458.13	439.25
ժամանակահատվածի միջին	486.26	491.68	473.39	466.01	447.89






ՀՀ ԴՐԱՄ / ԵՎՐՈ ՓՈԽԱՐԺԵՔԸ

Ամսաթիվ	Դ - 04	Հ - 05	Փ - 05	Մ - 05	Ա - 05
1	664.82	-	622.56	624.40	592.84
2	663.62	-	616.39	622.08	-
3	662.86	-	624.49	616.40	-
4	-	661.22	617.38	618.10	592.62
5	-	649.65	-	616.47	588.24
6	656.85	-	-	-	582.16
7	655.48	646.32	614.66	-	582.96
8	652.47	651.25	608.87	-	584.42
9	635.74	-	604.44	616.47	-
10	635.98	653.41	603.67	626.39	-
11	-	651.73	606.79	629.35	579.71
12	-	656.72	-	-	585.72
13	630.53	658.53	-	-	586.35
14	641.43	663.98	609.03	629.29	582.21
15	643.80	-	613.68	627.23	576.93
16	648.19	-	615.15	626.90	-
17	649.47	654.82	614.98	626.16	-
18	-	653.53	617.43	625.17	576.51
19	-	649.58	-	-	575.44
20	642.83	645.55	-	-	578.65
21	648.50	632.53	616.33	618.95	581.01
22	649.57	-	616.94	613.53	579.45
23	647.56	-	623.05	609.70	-
24	651.16	631.56	622.86	602.39	-
25	-	632.44	624.84	597.68	578.38
26	-	628.25	624.84	-	571.66
27	655.93	625.63	-	-	570.27
28	656.83	-	620.36	596.13	567.72
29	662.88	-	-	594.25	566.85
30	661.13	-	-	592.18	566.85
31	-	623.27	-	592.96	-
ժամանակահատվածի վերջ	661.13	623.27	620.36	592.96	566.85
ժամանակահատվածի միջին	650.80	645.79	616.13	614.64	579.41



ՀՀ ԴՐԱՄ / ՌԴ ՌՈՒԲԼԻ ՓՈԽԱՐԺԵՔԸ

Ամսաթիվ	Դ - 04	Հ - 05	Փ - 04	Մ - 05	Ա - 05
1	17.76	-	17.01	17.00	16,42
2	17.82	-	16.92	16.99	-
3	17.78	-	17.10	16.99	-
4	-	17.52	16.95	16.96	16,40
5	-	17.52	-	16.94	16,37
6	17.68	-	-	-	16,27
7	17.52	17.61	16.95	-	16,26
8	17.40	17.78	16.86	-	16,22
9	17.09	-	16.80	16.99	-
10	17.05	17.84	16.81	17.03	-
11	-	17.92	16.91	17.09	16,22
12	-	17.87	-	-	16,25
13	17.00	17.98	-	-	16,26
14	17.19	18.01	16.88	17.08	16,21
15	17.27	-	16.88	17.07	16,17
16	17.35	-	16.87	17.04	-
17	17.41	17.90	16.84	17.03	-
18	-	17.86	16.91	17.02	16,06
19	-	17.69	-	-	15,95
20	16.99	17.52	-	-	16,04
21	17.38	17.36	16.92	16.96	16,06
22	17.39	-	16.92	16.91	16,02
23	17.38	-	16.97	16.78	-
24	17.39	17.30	16.95	16.70	-
25	-	17.28	16.98	16.62	15,95
26	-	17.24	16.98	-	15,89
27	17.41	17.12	-	-	15,83
28	17.48	-	16.97	16.57	15,80
29	17.51	-	-	16.45	15,80
30	17.51	-	-	16.46	15,80
31	-	17.09	-	16.46	-
ժամանակահատվածի վերջ	17.51	17.09	16.97	16.46	15,80
ժամանակահատվածի միջին	17.40	17.60	16.92	16.87	16,10



ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԾԱՎԱԼ ՆԵՐԸ ԵՎ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ [1]

ժամկետ		1 – 3 ամիս[2] (ներառյալ 91-օրյա)					
		Տեղաբաշխման ծավալը (մլն ՀՀ դրամ)	Միջին անվ. եկամտաբ. (%)	Նվազագույն տոկոսադրույքը	Առավելագույն տոկոսադրույքը	Ստանդարտ շեղումը	Իրական եկամտաբ.[3]
2004	Հոկտեմբեր	2000.0	4.0	4.0	4.0	0.0	1.0
	Նոյեմբեր	1500.0	4.0	4.0	4.1	0.1	1.0
2005	Ապրիլ	1000.0	3.8	3.8	3.8	0.0	0.7

ժամկետ		3 – 6 ամիս[2] (ներառյալ 181-օրյա)					
		Տեղաբաշխման ծավալը (մլն ՀՀ դրամ)	Միջին անվ. եկամտաբ. (%)	Նվազագույն տոկոսադրույքը	Առավելագույն տոկոսադրույքը	Ստանդարտ շեղումը	Իրական եկամտաբ.[3]
2002	Հունվար	500.0	14.7	14.7	14.7	0.0	19.3
	Ապրիլ	700.0	13.6	13.6	13.6	0.0	10.0
2005	Հունվար	1500.0	4.3	4.3	4.3	0.0	11.1
	Փետրվար	1000.0	4.2	4.2	4.2	0.0	9.8
	Ապրիլ	1000.0	4.2	4.2	4.2	0.0	1.2

ժամկետ		6 - 9 ամիս[2] (ներառյալ 181-օրյա)					
